

Նոյն հայրը հետեւեալ օր՝ կէս օրին, կը ծեծեր իր տղան:

Դրացի հայրենակից մը հարցուց տփոցին պատճառը: Հայրը պատասխանեց.

-Ի՛նչպէս չծեծեմ: Դպրոց երթալու տեղ գնա տասը-քսան քիլօ բաթաթէս գողցիր՝ ըսի, ու ան գացեր փողոցները խաղացեր է:

Ու դրացին յուզումով.

-Ա՛խ, ա՛խ, Սերգիս աղբար, մեր Չէնկիլերցի տղաքը ա՛լ յարգած չունին մեր աւանդութիւնները: Անոնք այլասերիլ սկսան:

*

Ո՛չ, Չէնկիլերցին չայլասերիր ու չի կլլուիր ոչ մէկ ազգի կողմէ:

Չինքը կլլողին կոկորդը կը մնայ Չէնկիլերցին:

Ատեն մը կը հաստատուի զինքը կլլողին կոկորդին մէջ, իր դիմադրական եւ այլ մասնագիտական կարողութիւններով կը սկսի գործի: Կը քաշէ զինքը կլլողին ակռաները, մանաւանդ երբ անոնք ոսկեպատ են, կը կապէ զինքը կլլողին լեզուն եւ անոր գլուխէն մուխ կը հանէ:

Չինքը կլլողին կոկորդին մէջ նտած կը կլլէ ամէն ինչ ու կը սկսի երգել իր հայրենակից Մեզպուրեանի «Ո՛վ մեծասքանչ»ը:

Յետոյ կ'իջնէ վար, զինքը կլլողին կոկորդէն ու իրմէ առաջ իրապէս կլլուածները կը խուզարկէ՝ ստամոքսները թէթեւցնելով: Կը պատռէ զինքը կլլողին լեղին ու կը բարձրանայ՝ զինքը կլլողին խելքը գլխէն թռցնելով:

Չէնկիլերցիին հետ խօսիլ, խնդալ, խմել կ'ըլլայ, խեղդել, խաշել, խածնել կ'ըլլայ, խորել, խորանալ ալ շատ լաւ կ'ըլլայ, սակայն իրեն հետ խաղալ չըլլար: